ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
Գորիսի պետական համալսարանի
գիտական խորհրդի նիստում

ՈՒԳ աշխ. գծով պրոռեկտոր

_____ Զ. Գրիգորյան

« 14 » մայիսի 2024 թ.

Կ Ա Ր Գ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

2024

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Բակալավրի ավարտական աշխատանքն ինքնուրույն, տեսական կամ կիրառական նշանակության աշխատանք է, որն արտացոլում է տվյալ մասնագիտության շրջանակներում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և մասնագիտական ոլորտին առնչվող խնդիրներ բարձրացնելու ու լուծումներ առաջադրելու հմտությունները:

1.2. Ավարտական աշխատանքների ծավալին, բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները տարբեր են՝ պայմանավորված կրթական ծրագրով:

1.3 Ավարտական աշխատանքների թեմաները ներկայացվում են ամբիոնների կողմից և հաստատվում ֆակուլտետի խորհրդում՝ 6-րդ կիսամյակի վերջում(հեռակա ուսուցման դեպքում՝ 8-րդ կիսամյակի վերջում): Բոլոր ուսանողները մինչև 7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 9-րդ) կիսամյակի ավարտը պետք է ունենան բակալավրի ավարտական աշխատանքի հրամանագրված թեմաներ և ղեկավարներ: Ուսանողներին իրավունք է վերապահվում հանդես գալու թեմայի առաջարկությամբ՝ հիմնավորում ներկայացնելու պայմանով: Ավարտական աշխատանքի թեմաները չպետք է կրկնվեն առնվազն 3 տարի:

1.4. Ավարտական աշխատանքը կատարվում է վերջին երկու կիսամյակների ընթացքում:

1.5. Ամբիոնի առաջարկով, ֆակուլտետի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմից նշանակվում են ղեկավարներ: Ղեկավար կարող են նշանակվել նաև այլ հաստատությունների և գիտահետազոտական կենտրոնների մասնագետներ:

1.6. Ղեկավարի առաջարկությամբ ամբիոնը իրավունք ունի աշխատանքի տարբեր բաժինների համար խորհրդատուներ հրավիրել այլ ամբիոններից կամ հաստատություններից:

1.7. Ուսանողի կողմից ստորագրված ավարտված աշխատանքը ներկայացվում է ղեկավարին: Հավանության արժանանալուց հետո այն ստորագրվում և ղեկավարի գրավոր կարծիքի հետ միասին ներկայացվում է ամբիոնի վարիչին: Ամբիոնի վարիչի ներկայացմամբ աշխատանքի գրախոս է նշանակվում ԲՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմից, ինչպես նաև գիտական կենտրոնների և այլ հաստատությունների համապատասխան փորձառու մասնագետներից: Գրախոսը չի կարող լինել տվյալ աշխատանքի գիտական ղեկավարը:

2. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԸ

Ավարտական աշխատանքի կառուցվածքը հետևյալն է.

Կառուցվածքը	Ներկայացվող պահանջները
Տիտղոսաթերթ	Տիտղոսաթերթը լրացվում է՝ համաձայն հավելված 1-ի
Բովանդակություն	Ըստ հերթականության ներկայացվում են աշխատանքի բոլոր բաժինները, դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները (առկայության դեպքում), որոնք կցվում են աշխատանքին:
Ներածություն	Ներկայացվում են աշխատանքի արդիականությունը, նպատակը, տեսական և / կամ կիրառական նշանակությունը:
Հիմնական մաս	Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է գլուխներից և ենթագլուխներից: Այն ներառում է կատարված աշխատանքի նկարագրությունը և ուսումնասիրության արդյունքների շարադրումը: **Ճարտարագիտական մասնագիտությունների համար** - ոլորտին առնչվող գրականության վերլուծություն, որի հիման վրա պետք է ձևակերպվեն աշխատանքում հետազոտման ենթակա խնդիրները և հարցերը, դրանց արդիականությունը, առանձնահատկությունները, - հետազոտման մեթոդի ընտրումը (մշակումը) և հիմնավորումը, - հաշվարկային ծրագրերը և դրանց հիման վրա ստացված արդյունքները՝ համապատասխան վերլուծություններով, - փորձագիտական կամ հետազոտական մասը
Եզրակացություններ	Ներկայացվում են եզրակացությունները, որոնցում ամփոփվում են աշխատանքի արդյունքները:
Օգտագործված գրականության ցանկ	Նշվում է միայն այն գրականությունը, որն օգտագործվել է աշխատանքը շարադրելիս, և որին համապատասխան հղումներ են արված:
Հավելվածներ	Առկայության դեպքում կցվում են աշխատանքին:

3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

3.1 Տեքստը հավաքվում է Sylfaen կամ GHEA Grapalat տառատեսակով, Ա4 ձևաչափի սպիտակ թղթի մեկ կողմում՝ 12 տառաչափով, յուրաքանչյուր էջում 28-30 տող: Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ: Ավարտական աշխատանքի բաժինների (գլուխների) անվանումները գրվում են թավ (bold) և գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմ խորքից: Ավարտական

աշխատանքի բոլոր էջերը, ներառյալ նկարները, աղյուսակները, հավելվածը և այլն, համարակալվում են: Տիտղոսաթերթը համարվում է առաջին էջ և չի համարակալվում:

Աշխատանքի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են էջի ներքևում՝ կենտրոնում:

3.2 Աշխատանքում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները, հավելվածները և այլն համարակալվում են, և դրանց տրվում են անվանումներ: Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են դրանց ներքևում, մեջտեղում՝ 10 pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում, իսկ հավելվածներինը՝ նոր էջի վերին աջ անկյունում:

3.3 Աշխատանքի վերջում տրվում է օգտագործված գրականության ցանկը, որը ներկայացվում է բնագրի լեզվով: Նախ նշվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը և անվան սկզբնատառ(եր)ը, այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, հերթական համարը, էջերը կամ գրքի էջերի քանակը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանոթանալու ամսաթիվը (օրինակ, ... // URL: http://www.info..., 14.02.2019):

3.4 Հղումները տեքստում տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի ([1], [2-5], [3, 7, 9-11], [3, էջ 15], [7, էջ 5-9]) կամ տողատակում՝ նշելով հեղինակի ազգանունը և հրատարակման տարեթիվը:

3.5 Ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում է ֆակուլտետի խորհուրդը՝ ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկություններից.

Հումանիտար և բնագիտական մասնագիտությունների համար – 30-50 էջ,

Ճարտարագիտական մասնագիտությունների համար – 50-70 էջ:

3.6. Ավարտական աշխատանքի պաշտպանությունից առնվազն մեկ ամիս առաջ աշխատանքը հանձնվում է ղեկավարին:

3.7. Ավարտական աշխատանքի պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ աշխատանքը ղեկավարի կարծիքի հետ միասին հանձնվում է համապատասխան մասնագիտական ամբիոն, որտեղ կազմակերպվում է նախնական պաշտպանություն:

3.8. Ձևակերպված աշխատանքը բոլոր կից փաստաթղթերի հետ (հավելվածներ 2, 3) հանձնվում է համապատասխան ամբիոնին աշխատանքի պաշտպանությունից երեք օր առաջ:

3.9. Ավարտական աշխատանքի գրախոսությունը իրականացվում է արտադրության, գիտական կենտրոնների, ուսումնական և այլ հաստատությունների համապատասխան մասնագետների կողմից, որոնց կազմը ամբիոնի վարիչի ներկայացմամբ հաստատվում է ամբիոնի նստում:

3.10. Բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման աշխատանքները կատարվում են ղեկավարի խորհրդատվությամբ և վերահսկողությամբ:

Ղեկավարի պարտականություններն են.

ա) բակալավրի ավարտական աշխատանքի առաջադրանքի կազմում,

բ) աշխատանքի կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում և դրա իրականացման վերահսկողություն,

գ) թեմայի վերաբերյալ գրականության և այլ աղբյուրների ընտրության և օգտագործման համար առաջարկություններ կամ խորհրդատվություն,

դ) ծանուցում ուսանողին՝ սույն կարգի դրույթների, պահանջների և գնահատման չափանիշների ու չափորոշիչների վերաբերյալ,

ե) խորհրդատվություն ուսանողին՝ ելույթի պատրաստման և պաշտպանության համար անհրաժեշտ ցուցադրական նյութերի ընտրության հարցում,

զ) աշխատանքի վերաբերյալ ղեկավարի գրավոր կարծիքի կազմում:

3.11. Ղեկավարի կարծիքում արտացոլվում են.

ա) աշխատանքի արդիականությունը և կարևորությունը,

բ) ուսանողի՝ ինքնուրույն աշխատելու, տվյալներ մշակելու և եզրակացություններ անելու կարողությունը,

գ) աշխատանքի ձևավորման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին,

դ) երաշխավորություն աշխատանքի հրապարակային պաշտպանության համար:

3.12. Պաշտպանությունից մեկ շաբաթ առաջ տեղի է ունենում համապատասխան ամբիոնի նիստ, որի ընթացքում կայացվում է որոշում՝ ավարտական աշխատանքը պաշտպանության ներկայացնելու մասին: Ամբիոնը կարող է նաև չերաշխավորել պաշտպանությունը, եթե՝

- ուսանողն ուսումնական պլանով նախատեսված առարկայից կամ առարկաներից ունի ակադեմիական պարտքեր(դեկանատի ներկայացմամբ, ակադեմիական պարտքերի մարման համար սահմանված ժամկերից հետո, մեկ շաբաթվա ընթացքում),

- առկա է աշխատանքի ներկայացման ժամկետների և ձևաչափի անհամապատասխանություն,

- բացակայում է ղեկավարի և/կամ գրախոսի կարծիքը*,

- աշխատանքում հայտնաբերվել է գրագողություն**

3.13. Ավարտական աշխատանքի պաշտպանությունն անցկացվում է համաձայն հաստատված ժամանակացույցի՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում:

3.14. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի ձևավորվումը, ինչպես նաև աշխատանքի հրապարակային պաշտպանությունը իրականացվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի***:

3.15. Ավարտական աշխատանքի պաշտպանությանը թույլատրվում են այն ուսանողները, ովքեր կուտակել են բակալավրի կրթական ծրագրով սահմանված կրեդիտները, իսկ նրանց ցուցակը հաստատվում է ռեկտորի հրամանով՝ ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ:

3.16. Ավարտական աշխատանքի պաշտպանությունը անց է կացվում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում:

3.17. Ավարտական աշխատանքի պաշտպանությունը արձանագրվում և ձայնագրվում է: Ձայնագրությունը պահվում է արդյունքները հրապարակելուց հետո 6 ամիս:

3.18. Ավարտական աշխատանքը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսանողին տրվում է մինչև 15 րոպե ժամանակ: Հարց ու պատասխանի համար տրվում է մինչև 20 րոպե ժամանակ:

3.19. Ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» գնահատականներով՝ ԳՊՀ-ում ընդունված գնահատման 100 բալային համակարգով և հայտարարվում նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

3.20. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումները ընդունվում են հանձնաժողովի փակ նիստում: Ուսանողի գիտելիքների գնահատման մասին որոշումը

ընդունվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականով:

3.21. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամները գնահատում են ներկայացված աշխատանքի համապատասխանությունը ըստ հավելված 4 -ում բերված ցուցանիշների և հիմք է հանդիսանում վերջնական գնահատականի ձևավորման համար:

3.22. Ավարտական աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի բոլոր որոշումները քարտուղարի կողմից արձանագրվում են արձանագրությունների մատյանում: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները: Արձանագրությունները պահվում են հաստատությունում: Արձանագրության մեջ նշվում են ավարտական աշխատանքի պաշտպանության ժամանակ տրված հարցերը:

3.23. Ավարտական աշխատանքի պաշտպանությունից հետո 2 շաբաթվա ընթացքում դեկանի, մասնագիտական ամբիոնի և արխիվի աշխատակիցների համատեղ հանձնաժողովի միջոցով կազմվում է հանձնման-ընդունման ակտ և աշխատանքները հանձնվում են արխիվ:

3.24. Ավարտական աշխատանքի պաշտպանությունից «անբավարար» գնահատական ստացած ուսանողին իր ցանկությամբ տրվում է ակադեմիական տեղեկանք, հաստատության ղեկավարին ուսանողի կամ նրա լիազորված անձի կողմից դիմումը ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

3.25. Ավարտական աշխատանքի պաշտպանությանը չներկայացած կամ «անբավարար» ստացած ուսանողին թույլատրվում է մասնակցել ավարտական աշխատանքի պաշտպանությանը հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին: Ավարտական աշխատանքի պաշտպանության համար վերականգնված ուսանողը կցվում է համապատասխան ամբիոնին և ստանում ավարտական աշխատանքի նոր թեմա կամ կրկնում է նախորդը՝ ամբիոնի հիմնավորմամբ:

3.26. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը /հավելված 5/ քննարկվում է ֆակուլտետի խորհրդում և ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացվում է ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն:

3.27. Աշխատանքի նախապաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն, որը ներկայացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին:

3.28. Հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության** հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար» և կազմվում է արձանագրություն:

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

4.1. Գնահատման արդյունքների հրապարակումից հետո հանձնաժողովի նախագահը ներկա ուսանողներին հարցնում է բողոքների առկայության մասին:

4.2 Ուսանողը գնահատման արդյունքների վերաբերյալ բողոքի դեպքում մեկ ժամվա ընթացքում դիմում է ներկայացնում հանձնաժողովի նախագահին:

4.3. Բողոքարկումն իրականացվում է, եթե առկա են «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի*** ընթացակարգային դրույթների խախտումներ:

4.4. Հանձնաժողովի նախագահը դիմումը ստանալուց անմիջապես հետո ուսանողին է ներկայացնում հանձնաժողովի անդամների գնահատումների արդյունքները՝ համաձայն սույն կարգի 3.19 կետում հավելված 4-ում սահմանված չափանիշների և չափորոշիչների:

4.5. Գնահատման գործընթացում ընթացակարգերի կիրառման և գնահատման միավորների հաշվարկման ու ամփոփման սխալների հայտնաբերման դեպքում՝ հանձնաժողովը.

ա) փոխում է ուսանողի գնահատականը, եթե հայտնաբերված խախտումը կամ սխալն ազդել են գնահատման արդյունքի վրա,

բ) չի փոխում գնահատականը, եթե սխալը կամ թերությունը չեն ազդել գնահատման արդյունքի վրա,

գ) չեղարկում է պաշտպանության արդյունքները, եթե առկա են սույն կարգի 4.3 կետի ընթացակարգային խախտումներ և անմիջապես կազմակերպում է նոր պաշտպանություն:

Հավելված 1

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ֆակուլտետ _____

Ամբիոն _____

Մասնագիտություն _____

Կրթական ծրագիր _____

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ _____

_____ խմբի ուսանող(ուհի) _____
(ազգանուն, անուն, հայրանուն, ամսաթիվ, ստորագրություն)

_____

Աշխատանքի ղեկավար_____
(ազգանուն, անուն, հայրանուն, ամսաթիվ, գիտ. աստիճան, ստորագրություն)

_____

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

Ամբիոնի վարիչ _____
(ազգանուն, անուն, հայրանուն, ամսաթիվ, գիտ. աստիճան, ստորագրություն)

Ֆակուլտետի դեկան _____
(ազգանուն, անուն, հայրանուն, ամսաթիվ, գիտ. աստիճան, ստորագրություն)

ԳՈՐԻՍ 2024

Հավելված 2

ԿԱՐԾԻՔ

_____ խմբի ուսանող _____ ավարտական աշխատանքի վերաբերյալ

(անուն, ազգանուն)

Թեմա _____

_____

Ավարտական աշխատանքը բաղկացած է _____ էջից:

Ավարտական աշխատանքի կատարման ընթացքում ուսանողը՝

1. Ցուցաբերել է ինքնուրույնություն _____
2. Ցուցաբերել համապատասխան գիտելիքներ _____
3. Օգտվել է մասնագիտական գրականությունից _____
4. Պահպանել է թեզի կատարման ժամանակացույցը _____
5. Ավարտական աշխատանքի ղեկավարի կարծիքը _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Ավարտական աշխատանքի ղեկավար _____

Հավելված 3

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԳՊՀ բակալավրիատի ուսանող(ուհի)

_____-ի
(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

_____
(թեմայի անվանումը)

1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը

_____

_____

_____

2. Հետազոտության իրականացումը և արդյունքները

_____

_____

_____

3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը

_____

_____

_____

Դիտողություններ

_____

_____

_____

Եզրակացություն (աշխատանքը բավարարում է/չի բավարարում ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջները, հեղինակն արժանի է տվյալ մասնագիտությամբ բակալավրի որակավորման աստիճանի շնորհմանը)

_____

_____

Գրախոս՝

_____
(ազգանուն, անուն, հայրանուն)

Ստորագրություն _____

«____»_____202__ թ.

Ավարտական աշխատանքի գնահատման չափանիշները, չափորոշիչները և հատկացվող միավորներ

Հավելված 4

Գնահատմանչափանիշ/ առավելագույն միավոր	Չափորոշիչ	Հատկացվող միավոր	Ընդհանուր միավոր
1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը Առավելագույնը՝ 10 միավոր	1.1. Հիմնավորված է աշխատանքի արդիականությունը, սահմանված են աշխատանքի նպատակը և խնդիրները: Կատարված է թեմային առնչվող գրականության վերլուծություն	0-10	
2. Աշխատանքի կատարումը և արդյունքները Առավելագույնը՝ 30 միավոր	2.1. Աշխատանքը կատարված է ինքնուրույն՝ դրված խնդիրներին համապատասխան	0-10	
	2.2. Ստացված արդյունքները հիմնավորված են և առաջադրում են դրված խնդիրների տեսական կամ կիրառական լուծումներ	0-10	
	2.3.Կատարված է արդյունքների վերլուծություն, և արված են համապատասխան եզրակացություններ	0-10	
3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը Առավելագույնը՝ 20 միավոր	3.1. Աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված: Աշխատանքի գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները համապատասխանում են բովանդակությանը	0-10	
	3.2. Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների: Առկա են աշխատանքի արդյունքները հիմնավորող տվյալները (օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն)	0-10	
4. Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը Առավելագույնը՝ 40 միավոր	1. Զեկույցում հիմնավորվում են աշխատանքի արդիականությունը, նպ-տակը և խնդիրները, ներկայացվում են աշխատանքի բովանդակությունը, արդյունքները և եզրակացությունները	0-10	
	4.2. Զեկույցը հստակ է և հետևողական, զեկուցողը կարողանում է փոխկապակցված ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել արդյունքները	0-10	
	4.3. Հարցերին և դիտողություններին զեկուցողը պատասխանում է հիմնավորված և սպառիչ	0-10	
	4.4. Ցուցադրական նյութն արտացոլում և պարզաբանում է աշխատանքի հիմնական բովանդակություն	0-10	
	Արդյունարար առավելագույն միավորը՝ 100		

ԱԱՀ անդամ՝ _____

(ազգանուն, անուն, հայրանուն, ամսաթիվ, գիտ. աստիճան, ստորագրություն)

Հավելված 5

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ֆակուլտետ _____

Ամբիոն _____

202_ - 202_ ուս. տարվա թիվ __ ԱԱՀ-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտությունը _____

Դասիչը _____

Կրթական ծրագիրը _____

1. Ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքները

Կրթական աստիճանը	Պաշտպանությանը թույլատրվածների թիվը	Չեն ներկայացել պաշտպանության	Ստացել են գնահատականներ								Գերազանցության դիպլոմ շնորհվածների թիվը	Ընդամենը պաշտպանել են	Պաշտպանությունների միջին գնահատականը
			«Գերազանց»		«Լավ»		«Բավարար»		«Անբավարար»				
			Ուսանողների թիվը	%	Ուսանողների թիվը	%	Ուսանողների թիվը	%	Ուսանողների թիվը	%			
Բակալավր													
Ընդամենը													

2. Հատուկ կարծիք _____

_____

_____

_____

_____

_____

_____

Թիվ __ ԱԱՀ-ի նախագահ _____ / /

Ֆակուլտետի դեկան _____ / /

Ամբիոնի վարիչ _____ / /

*-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳ», հաստատված՝ ՀՀ ԿԳ նախարարի 2017 թ նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրամանով:

**-«Ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելը առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և որպես իրենը ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով ներկայացնելը համարվում է գրագողություն», ՀՀ օրենքը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին, գլուխ 5, հոդված 65, 4-րդ կետ (ընդունվել է 15.06.2006):

- ԳՊՀ «Ակադեմիական ազնվության հայեցակարգ»

***-Գրախոսը նախապես պետք է ծանոթ լինի սույն կարգում սահմանված բակալավրի ավարտական աշխատանքի գնահատման չափանիշներին